

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°1

2021թ սեպտեմբերի 9-ին ժամը 19<sup>00</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021- 2022 ուստարվա N°1 առցանց նիստը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում կատարվելիք աշխատանքներ մասին
2. 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում,
3. Ընթացիկ հարցեր:

Նախքան օրակարգին անցնելը Է. Կոկանյանը 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներին, բակալավրիատի 1-ին կուրսում ունենք ընդունված 3 ուսանող, առկա մագիստրատուրայում` 5, իսկ հեռակա մագիստրատուրայում 6 ուսանող: Հենց առաջին նիստով պրն. Կոկանյան հիշեցրեց, որ դիմորդների հավաքագրման աշխատանքները պետք է միշտ ուշադրության կենտրոնում լինեն, թեմային առնչվող հարցերը պետք է մշտապես քննարկվեն ամբիոնի նիստերում և բացի այս պետք է շարունակել դպրոցներ այցելությունները և ներկայացնել մեր Բուհ-ը: Ընդ որում պրն. Կոկանյանը նշեց, որ սա վերաբերում է ոչ միայն դասախոսական կազմին, այլ ամբիոնի ողջ աշխատակազմին:

Ըստ օրակարգի 1-ին հարցը - Google classroom հարթակում կատարվելիք աշխատանքների և 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերի հաստատումն է: Է. Կոկանյանը նշեց, որ Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում արդեն ստեղծված են 1-ին կիսամյակի բակալավրիատի 1-4-րդ և մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի դասընթացները: Եվ ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, այս տարի ևս պետք է հաստատվեն տվյալ կիսամյակում դասավանդվող դասընթացների թեմատիկ տրոհումները, որպեսզի տեղադրվեն classroom հարթակի համապատասխան դասընթացում: Ուսանողներին դասախոսությունների փաթեթը կարող են տեղադրել ինչպես կիսամյակի սկզբում, այնպես է ամենշաբաթյա կամ ամենամսյա գրաֆիկով: Ինչպես նաև յուրաքանչյուր դասընթացում պետք է տեղադրվի առնվազն 1 գնահատվող առաջադրանք:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումները և առարկայական նկարագրերը:

### Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերից անդրադարձան 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների կազմակերպմանն ու անցկացմանը: Ամբիոնի պրակտիկայի պատասխանատու Ն. Բաբաջանյանը նշեց, որ այս ուսումնական տարում ուսումնական պրակտիկաները կազմակերպվելու են առերես: Ն. Բաբաջանյանը ներկայացրեց, որ 1-ին կիսամյակում 6 շաբաթ մանկավարժական պրակտիկա ունեն բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողները, ովքեր իրենց պրակտիկան անցկացնելու են առերես, առկա 3-րդ կուրսի ուսանողներ, ովքեր շարունակական պրակտիկա ունեն, շաբաթական 1 օր և 3 շաբաթ մանկավարժահետազոտական պրակտիկա ունեն

առկա և հեռակա մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողները, որոնց պրակտիկան կազմակերպվելու և անցկացվելու է ՀՊՄՀ-ում ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: Մագիստրոսները կկցվեն իրենց գիտական ղեկավարների դասընթացներին՝ բակալավրիատի կուրսերում և հնարավորության դեպքում կվարեն դասեր: Բացի դա, ըստ ամբիոնում ընդունված ձևաչափի մագիստրոսներին հանձնարարվում է պատրաստել առանձին դասընթացների առարկայական նկարագրեր և թեմատիկ տրոհումներ, դրանց հիման վրա կազմում են թղթապանակներ: Պրակտիկայի ավարտին կազմակերպվում է պրակտիկայի պաշտպանություն, ըստ նախապես սահմանված գրաֆիկի:

Պրակտիկաների համար ևս classroom հարթակում ստեղծվել են առանձին դասընթացներ, որտեղ տեղադրվում են ուսանողների կատարած աշխատանքերը, ընթացիկ հաշվետվությունները և վերջում թղթապանակները:

Ընթացիկ հարցերից Է.Կոկանյանը անդրադարձավ դասերի կայացմանը: Նա նշեց, որ ուսանողների բացակայության և դասերի փոփոխության մասին անպայման տեղեկացնել ամբիոնին: Քանի որ Covid 19-ի համաճարակով պայմանավորված այս տարի ևս դասերը անցկացվում են հիբրիդային ձևով /առցանց և լսարանային/ չնայած այն հանգամանքին, որ ամբիոնը միշտ վերահսկել է դասերի անցկացման պրոցեսը, ցանկալի է, որ դասերի ավարտին դասախոսները ամբիոնին տեղեկացնեն օրվա դասապրոցեսի մասին կամ հնարավոր տեղափոխությունների մասին, որպեսզի էլեկտրոնային դասացուցակում նշումներ արվեն:

Նիստի ավարտին Է. Կոկանյանը հորդորեց խստագույնս պահել հակահամաճարակային կանոնները լսարանային դասերի ժամանակ:

Նիստի նախագահ՝  Է.Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Ն.Մխիթարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ NՁ

2021թ դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021- 2022 ուստարվա NՁ հարցումով առցանց նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Ամբիոնի 2021 թվականի հաշվետվության հաստատում,
2. Ընթացիկ հարցեր:

**Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:**

Օրակարգում ընդգրկված էր 1 հարց` ամբիոնի 2021 թվականի հաշվետվության ներկայացումը և հաստատումը: Է. Կոկանյանը ներկայացրեց ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հաշվետվությունը`

### 1. Ամբիոնի ուսումնական գործունեություն

Հաշվետու ուսումնական տարվա համար նախատեսված ուսումնական աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով: Ուսուցման և ուսումնառության բոլոր աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են համալսարանի կանոնադրության, գիտխորհրդի, ֆակուլտետի խորհրդի, դեկանատի և ամբիոնի ընդունած որոշումների հիման վրա: Քննարկվել, վերամշակվել և վերահաստատվել են բոլոր առարկաների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Վերամշակվել և վերահաստատվել են ըստ ուսումնական պլանի կատարվող լաբորատոր աշխատանքների բացատրականները:

Ուսումնառության արդյունքները համապատասխանում են առարկայական նկարագրերով սահմանված վերջնարդյունքներին:

Ուսումնառության արդյունքների գնահատումը իրականացվել է ուսումնական պլաններում նշված ստուգման ձևերով և առարկայական նկարագրերով սահմանված գնահատման բաղադրիչների հիման վրա ԲՈՒՀ-ում ընդունված ընդհանուր գնահատման համակարգով: Գնահատումը իրականացնելիս հաշվի են առնվել առարկաների առանձնահատկությունները, լաբորատոր և գործնական դասերը: Գնահատման բաղադրիչների մաս է կազմում նաև classroom էլեկտրոնային հարթակում գնահատվող առաջադրանքները:

Ըստ ուսումնական պլանի կազմակերպվել և անցկացվել բոլոր դասընթացները, ինչպես նաև մանկավարժական և ուսումնական պրակտիկաները: Բոլոր տիպի պրակտիկաներից առաջ կազմակերպվել են կոնֆերանսներ: Ավարտին ուսանողները ներկայացրել են հաշվետվություն և կազմակերպվել են ամփոփիչ կոնֆերանսներ և պրակտիկայի պաշտպանություն ըստ համալսարանի պրակտիկայի վարչության ներկայացրած ձևաչափի: Ամբիոնում առկա են բոլոր պրակտիկաների թղթապանակները:

Ամբիոնի աշխատակիցները մասնակցել են 3 միջազգային կոնֆերանսների, հանդես են եկել բանավոր զեկույցներով՝

- Ամբիոնի մասնագետ Ն.Մխիթարյանը սեպտեմբերի 21-24-ը ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում մասնակցել է Laser Physics-21 ամենամյա միջազգային կոնֆերանսին (ք.Աշտարակ), հանդես է եկել բանավոր զեկույցով:
- Ամբիոնի մասնագետ Ն.Մխիթարյանը օգոստոսի 30-ից սեպտեմբերի 11-ը մասնակցել է “The 6th International Advanced School Frontiers in Optics & Photonics” (ք.Երևան) միջազգային գիտաժողովին (առանց զեկույցի):

Ամբիոնի դասախոս Ա. Թարոյանը հոկտեմբերի 18-24-ը մասնակցել է “International Conference on Electron, Positron, Neutron and X-ray scattering under the External Influences” միջազգային գիտաժողովին (ք.Երևան), հանդես է եկել բանավոր զեկույցով:

### **Ամբիոնի հետազոտական գործունեությունը:**

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից տպագրվել է 6 հոդված հեղինակավոր ամսագրերում, որից 4-ը ցիտվում են Scopus համակարգում: Տպագրվել է 1 ուսումնական ձեռնարկ ՀՊՄՀ դասիչով:

### **Արտաքին կապեր և միջազգային գործունեություն**

Ամբիոնը համագործակցում է՝

1. ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի,
2. Ֆրանսիայի Լորենի համալսարանի Օպտիկական Նյութերի և Ֆոտոնիկական համակարգերի լաբորատորիայի (LMOPS),
3. Իտալիայի Պադովայի համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի,
4. Ամերիկայի Միացյալ Նահանգների Սան Անտոնիոյի և Բոզեմանի համալսարանների ֆիզիկայի ֆակուլտետների հետ:

### **Մասնագիտական կողմնորոշման և մարքեթինգային գործունեություն**

Հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ կապերի ձևավորման նպատակով ամբիոնում ամեն տարի կազմվում է դպրոցների այցելության ժամանակացույց և ըստ ժամանակացույցի ամբիոնի աշխատակիցները այցելում են և՛ մարզային, և՛ քաղաքային դպրոցներ:

### **Որակի ապահովում**

Ամբիոնի գործունեությունը մեծապես ուղղված է ուսուցման որակի բարձրացմանը: Որակի ապահովմանն ուղղված աշխատանքներից են՝

- SS տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում
- հազեցած լաբորատորիաների առկայությունը
- classroom էլեկտրոնային հարթակը
- ամբիոնում կազմակերպվող և իրականացվող սեմինարները
- փոխադարձ դասալսումները


Բաց քվեարկության արդյունքում՝

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել ամբիոնի 2021 թվականի հաշվետվությունը

Նիստի նախագահ՝

 Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝

 Ս. Մխիթարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°3

2022թ փետրվարի 7-ին ժամը 12<sup>00</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021- 2022 ուստարվա N°3 նիստը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում:

2. ընթացիկ հարցեր

Ըստ օրակարգի 1-ին հարցը - Google classroom հարթակում կատարվելիք աշխատանքների և 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերի հաստատումն է: Է. Կոկանյանը նշեց, որ Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում արդեն ստեղծված են 2-րդ կիսամյակի բակալավրիատի 1-4-րդ և մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի դասընթացները: Ըստ կարգի յուրաքանչյուր կիսամյակի սկզբում պետք է հաստատվեն դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները, որպեսզի տեղադրվեն classroom հարթակի համապատասխան դասընթացում: Ինչպես առաջին կիսամյակում որոշվել էր ուսանողներին դասախոսությունների փաթեթը կարող են տեղադրել ինչպես կիսամյակի սկզբում, այնպես էլ ամենշաբաթյա կամ ամենամսյա գրաֆիկով:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերը:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների թեմատիկ տրոհումները:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների հարցաշարերը:

### **Ընթացիկ հարցեր**

Ընթացիկ հարցերից Է. Կոկանյանը անդրադարձավ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքին: Հանձնարարվեց 2 շաբաթյա ժամկետում ներկայացնել հաշվետվությունների ուսանողների կատարած աշխատանքների մասին: Հաջորդ նիստով նախատեսել մագիստրոսների ատեստավորումը:

Ընթացիկ հարցերից անդրադարձան 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի պրակտիկաների կազմակերպմանն ու անցկացմանը: Ամբիոնի պրակտիկայի

պատասխանատու Ն. Բաբաջանյանը նշեց, որ այս ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ուսումնական պրակտիկաները կազմակերպվելու են առերես: Ն. Բաբաջանյանը ներկայացրեց, որ 2-րդ կիսամյակում 5 շաբաթ մանկավարժական պրակտիկա ունեն բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողները, ովքեր իրենց պրակտիկան անցկացնելու են առերես ՀՊՄՀ հիմնական դպրոցում և առկա բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանողները, շարունակական պրակտիկա, շաբաթական 1 օր և 2 շաբաթ մանկավարժահետազոտական պրակտիկա ունեն առկա մագիստրատուրայի 1-ին, հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողները, որոնց պրակտիկան կազմակերպվելու և անցկացվելու է ՀՊՄՀ-ում ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: Մագիստրոսները կկցվեն իրենց գիտական ղեկավարների դասընթացներին՝ բակալավրիատի կուրսերում և հնարավորության դեպքում կվարեն դասեր: Բացի դա, ըստ ամբիոնում ընդունված ձևաչափի մագիստրոսներին հանձնարարվում է պատրաստել առաձին դասընթացների առարկայական նկարագրեր և թեմատիկ տրոհումներ, դրանց հիման վրա կազմում են թղթապանակներ: Պրակտիկայի ավարտին կազմակերպվում են պրակտիկայի պաշտպանություն, ըստ նախապես սահմանված գրաֆիկի:

Պրակտիկաների համար ևս classroom հարթակում ստեղծվել են առանձին դասընթացներ, որտեղ տեղադրվում են ուսանողների կատարած աշխատանքերը, ընթացիկ հաշվետվությունները և վերջում թղթապանակները:

Նիստի նախագահ  Ն. Կոկանյան

Նիստի քարտուղար  Ս. Միխարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N<sup>0</sup>4

2022թ փետրվարի 28-ին ժամը 12<sup>20</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021- 2022 ուստարվա N<sup>0</sup>4 նիստը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. 2021-2022 ուստարվա ընդունելության մասին,
2. Google classroom հարթակում տարվող աշխատանքների մասին,
3. 1-ին և 2-րդ կուրսի մագիստրոսների ատեստավորման մասին:

### Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Ըստ օրակարգի 1-ին հարցը վերաբերում էր 2022-2023 ուստարվա ընդունելությանը: Է. Կոկանյանը նշեց, որ հաշվի առնելով հարցի կարևորությունը մշտապես անդրադարձել են ամբիոնի նիստերի և տարվել են աշխատանքներ այդ ուղղությամբ: Է. Կոկանյանը ևս մեկ անգամ շեշտեց դիմորդների հավաքագրման նպատակով դպրոցների այցելությունների կարևորությունը: Մայիս ամսին նախատեսվում է հայտագրումը ուստի պետք է հնարավորինս շատ այցելություններ կազմակերպել հատկապես մարզային դպրոցներ:

Երկրորդ հարցով Է. Կոկանյանը անդրադարձավ էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքներին: Նշվեց, որ Google classroom հարթակում տարվող աշխատանքները մշտապես վերահսկվում են ամբիոնի կողմից, ամբիոնի մասնագետ Ն. Մխիթարյանը ամեն ամիս մշտադիտարկում է անցկացնում հարթակում և պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվում Կրթության էլեկտրոնային կառավարման /ԿԷԿ/ բաժին: Այնուհանդերձ որոշ դասընթացներում առկա են թերություններ, հորդորեց առկա թերությունները շտկել կարճ ժամանակահատվածում:

Մյուս հարցով անդրադարձան մագիստրոսների ատեստավորմանը: Ինչպես նշվել էր ամբիոնի նախորդ նիստին /07.02.2022 արձ. 3/ պետք է ներկայացվեին հաշվետվություններ թեզերի կատարման ընթացքի մասին: Ուսանողները և ղեկավարները ներկայացրել էին հաշվետվությունները , թեզերի կատարման ընթացքի և թեզերի պատրաստվածության աստիճանի մասին: Է Կոկանյանյանը նշեց, չնայած ուսանողների աշխատանքներում առկա որոշ թերացումներին, առաջարկեց ատեստավորել առկա և հեռակա համակարգի մագիստրատուրայի 1-ին և 2-րդ ուսանողների և ուսանողներին 1 ամիս ժամանակ տրամադրել թերությունները վերացնելու համար: Հիմնվելով ուսանողների ներկայացրած աշխատանքների և հաշվետվությունների վրա`

Որոշեցին ատեստավորել առկա մագիստրատուրա 1-ին, 2-րդ և հեռակա մագիստրատուրա 1-ին ,  
2-դ կուրսի մագիստրոսներին:

Նիստի նախագահ

Է. Կոկանյան

Նիստի քարտուղար

Ն. Մխիթարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N<sup>05</sup>

2022թ մարտի 25-ին ժամը 12<sup>00</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021- 2022 ուստարվա N<sup>05</sup> նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1.Ավարտական ամփոփիչ քննությունների կազմակերպման մասին

2.1-ին և 2-րդ կուրսի մագիստրոսների ատեստավորման մասին

3.Ընթացիկ հարցեր

### Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Ըստ օրակարգի 1-ին հարցը վերաբերում էր 2021-2022 ուստարում ամփոփիչ քննությունների կազմակերպման ընթացքի մասին: Է. Կոկանյանը նշեց, որ հաշվի առնելով, Քովիդ 19 վիրուսով պայմանավորված երկրում տիրող համաճարակային իրավիճակը և հիվանդների թվաքանակը 2021-2022 ուստարում դասապրոցեսը կազմակերպվում և իրականացվում է հիբրիդային ձևաչափով: Առաջարկվեց, հաշվի առնելով քննաշրջանում երկրում տիրող իրավիճակը, կիսամյակային ամփոփիչ քննությունները և ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները կազմակերպել առերես: Դասախոսների կարծիքով առերես կազմակերպելը առավել նպաստակահարմար է:

*Որոշեցին* 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի ամփոփիչ քննությունները կազմակերպել առերես:

*Որոշեցին* 2021-2022 ուստարում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները կազմակերպել առերես:

Մյուս հարցով անդրադարձան 1-ին և 2-րդ մկուրսերի մագիստրոսների ատեստավորմանը: Է Կոկանյանյանը նշեց, որ նախորդ նիստով /28.02.2022թ. արձ.4 / ներկայացվեցին մագիստոսների հաշվետվությունները և ղեկավարների կարծիքները, չնայած ուսանողների աշխատանքներում առկա որոշ թերացումներին, որոշեցին ատեստավորել առկա և հեռակա համակարգի մագիստրատուրայի 1-ին և 2-րդ ուսանողների և ուսանողներին 1 ամիս ժամանակ տրամադրել թերությունները վերացնելու համար: Հիմնվելով ուսանողների ներկայացրած աշխատանքների և հաշվետվությունների վրա, որոշեցին`

*Որոշեցին* ատեստավորել առկա և հեռակա համակարգի 1-ին կուրսի մագիստրոսներին:

*Որոշեցին* ատեստավորել առկա համակարգի 2-րդ կուրսի մագիստրոսներին:

Ընթացիկ հարցերից Է. Կոկանյանը անդրադարձավ էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքներին: Նշվեց, որ Google classroom հարթակում տարվող աշխատանքները մշտապես

վերահսկվում են ամբիոնի կողմից, ամբիոնի մասնագետ Ն. Մխիթարյանը ամեն ամիս մշտադիտարկում է անցկացնում հարթակում և պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվում Կրթության էլեկտրոնային կառավարման /ԿԷԿ/ բաժին: Այնուհանդերձ որոշ դասընթացներում առկա են թերություններ, հորդորեց առկա թերությունները շտկել կարճ ժամանակահատվածում:

Նիստի նախագահ  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար  Ն. Մխիթարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°6

2022թ ապրիլի 21-ին տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021- 2022 ուստարվա N°6 նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.Առկա ավարտական աշխատանքների նախապաշտպանություն

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Նիստին մասնակցում էին ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը:

Առկա բակալավրիատի 4-րդ կուրսի թվով 1 ուսանողի ավարտական աշխատանքի նախապաշտպանությունը կազմակերպելու համար classroom հարթակում ստեղծված դասընթացում ուսանողը տեղադրել էր իր ավարտական աշխատանքը և տեսաներկայացումը:

Ուսանողը ելույթի ընթացքում ներկայացրեց ավարտական աշխատանքի նպատակը, հիմնական խնդիրերը, արդիականությունը և կատարված աշխատանքը հակիրճ:

Ուսանողի ելույթի և գիտական ղեկավարի կողմից տրված կարծիքի հիման վրա՝

*Որոշեցին* ատեստավորել 2021-2022 ուստարվա առկա բակալավրիատի 4-րդ կուրսի մեկ ուսանողին և ավարտական աշխատանքը երաշխավորել պաշտպանության՝

1. Գրիգորյան Մելինե Գագիկի Գիտական ղեկավար՝ Սաֆարյան Ն.

Է. Կոկանյանը նշեց, որ ավարտական աշխատանքի պաշտպանության օրը նշանակված է հունիսի 1-ին:

Նիստի նախագահ՝  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Ս. Մխիթարյան

2022թ ապրիլի 2-ին տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021-2022 ուստարվա N07 նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.Առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Նիստին մասնակցում էին ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը:

Առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 5 ուսանողների մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը կազմակերպելու համար classroom հարթակում ստեղծված դասընթացում ուսանողները տեղադրել էին իրենց մագիստրոսական թեզերը և տեսաներկայացումները:

Ուսանողները ելույթների ընթացքում ներկայացրեցին մագիստրոսական թեզերի նպատակը, հիմնական խնդիրները, արդիականությունը և կատարված աշխատանքները հակիրճ:

Ուսանողների ելույթների, ինչպես նաև գիտական ղեկավարների կարծիքների հիման վրա՝

Որոշեցին ատեստավորել 2021-2022 ուստարվա մագիստրատուրա 2-րդ կուրսի թվով 5 ուսանողներին և մագիստրոսական թեզերը երաշխավորել պաշտպանության:

- |                        |                  |               |
|------------------------|------------------|---------------|
| 1. Խաչատրյան Սյուզաննա | Գիտական ղեկավար՝ | Կոկանյան Է.   |
| 2. Պողոսյան Լալա       | Գիտական ղեկավար՝ | Եզանյան Ա.    |
| 3. Հայրապետյան Մերի    | Գիտական ղեկավար՝ | Բաբաջանյան Ն. |
| 4. Աբրահամյան Արևիկ    | Գիտական ղեկավար՝ | Եզանյան Ա.    |
| 5. Մելիքյան Ելենա      | Գիտական ղեկավար՝ | Իշխանյան Ա.   |

Է. Կոկանյանը նշեց, որ մագիստրոսական թեզերի պաշտպանության օրը նշանակված է հունիսի 1-ին:

Նիստի նախագահ՝  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Մելիքյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°8

2022թ մայիսի 18-ին տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի  
2021- 2022 ուստարվա N°8 նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Նիստին մասնակցում էին ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը:

Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի թվով 5 ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը կազմակերպելու համար ստեղծված դասընթացում ուսանողները տեղադրել էին ավարտական աշխատանքները և տեսաներկայացումները:

Ուսանողները ելույթների ընթացքում ներկայացրեցին ավարտական աշխատանքների նպատակը, հիմնական խնդիրները, արդիականությունը և կատարված աշխատանքները՝ հակիրճ:

Ուսանողների ելույթների և գիտական ղեկավարների կողմից տրված կարծիքների հիման վրա՝

1. Որոշեցին ատեստավորել 2021-2022 ուստարվա հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ֆիզիկա մասնագիտության թվով 4 և բնագիտություն մասնագիտության թվով 1 ուսանողներին և ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության:

Բնագետ՝

1. Կարապետյան Նարինե Գիտական ղեկավար՝ Պետրոսյան Պ.

Ֆիզիկա

- |                    |                                |
|--------------------|--------------------------------|
| 1. Խաչատրյան Յուրա | Գիտական ղեկավար՝ Դանիելյան Ա.  |
| 2. Ռամազյան Արսեն  | Գիտական ղեկավար՝ Դանիելյան Ա.  |
| 3. Ներսիսյան Սևադա | Գիտական ղեկավար՝ Բաբաջանյան Ն. |
| 4. Մադոյան Գոհար   | Գիտական ղեկավար՝ Եզանյան Ա.    |

Է. Կոկանյանը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանության օրը նշանակված է հունիսի 7-ին:

Նիստի նախագահ՝  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Սիսիթարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №9

2022թ մայիսի 20-ին ժամը 12<sup>30</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021- 2022 ուստարվա №9 առցանց նիստը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. 2022- 2023 ուս.տարվա ընդունելության մասին
2. Ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին Գ.Դեմիրխանյանը, Ս.Ասատրյանը, Է. Կոկանյանը, Ա.Թարոյանը, Ն. Բաբաջանյան, Ա. Դանիելյանը, Պ. Պետրոսյանը, Կ. Ահարոնյանը, Ս. Ներսիսյանը, Ց. Ավետիսյանը, Ն. Մխիթարյանը:

Ըստ Է. Կոկանյանի և Գ.Դեմիրխանյանի միջև նախնական պայմանավորվածության նիստի առաջին մասը վարեց Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան Գ. Դեմիրխանյանը:

Գ. Դեմիրխանյանը օրակարգի 1-ին հարցի առումով նշեց, որ ցավոք նախնական տվյալներով դիմորդների ընդհանուր թվով պայմանավորված պատկերը այդքան էլ հստակ չէ: Այս ուսումնական տարում ֆակուլտետում 4 մասնագիտությունների գծով ավարտում են թվով 130 ուսանող, իսկ դիմում-հայտերի ընդհանուր թիվը կազմում է 20, այսինքն լավագույն դեպքում ֆակուլտետում կունենանք 20 ուսանող առկա բակալավրիատի 1-ին կուրսում: Բացի դա նշեց, որ նախնական տվյալներով, հիմնված ուսանողներից հարցումների վրա, ֆիզիկա մասնագիտությամբ ունենք 8 դիմորդ մագիստրատուրայի բաժնում` 5 առկա և 3 հեռակա ուսուցման ձևերում: Նշվեց, որ ընդհանուր դիմորդների թվի կրճատում նկատվում է ոչ միայն ֆիզիկա մասնագիտության այլ բոլոր մասնագիտությունների գծով, ինչ բնականաբար կրեբի ժամաքանակի կրճատման, ինչի հետևանքով հնարավոր են կրճատումներ և, ինչու ոչ, նաև կառուցվածքային փոփոխություններ ֆակուլտետի ներսում:

Գ. Դեմիրխանյանը նշեց նաև, որ առաջիկայում կմեկնարկեն առկա, հեռակա մագիստրատուրայի և հեռակա բակալավրիատի ընդունելությունները, որոնք ռեալ հնարավորությունն են դիմորդներ հավաքագրման և ստեղծված իրավիճակից դուրս գալու

համար: Նշվեց նաև, որ եղած ուսանողների թվաքանակով ֆիզիկայի ամբիոնի դասախոսական կազմի 1 դասախոսին բաժին է ընկնում 4 ուսանող, որը ցավոք սրտի շատ քիչ է:

ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ Ս. Ասատրյանը իր ելույթում ևս նշեց, որ դիմորդների թվի ցածր ցուցանիշով պայմանավորված ստեղծված իրավիճակը բերում է ժամաքանակների կրճատման, ինչը կարող է բերել նաև դասախոսական կազմի կրճատման: Ս. Ասատրյանը նշեց, որ նախատեսվում է փոփոխություններ դասաբաշխումներում, նշվեց, որ ընթերակաների համար նախատեսված ժամերը նախատեսվում է փոխանցել ավարտական աշխատանքներին: Նշվեց նաև, որ առաջիկայում իրենց բաժինը նախատեսում է հանդիպումներ ամբիոնների որակի պատասխանատուների հետ կրթական ծրագրերի ելքային արդյունքների վերանայման հետ կապված: Նա նշեց, որ ԲՈՒՀ-ի վերջին հավատարմագրման ընթացքում էլ է նշվել, որ թերություններ կա այդ մասում, այսինքն մասնագիտական կրթական ծրագրերի կրթական վերջնարդյունքների համապատասխանելիության հետ:

Դիմորդների թվաքանակի նվազման հետ կապված քննարկման ժամանակ ելույթ ունեցավ Պ. Պետրոսյանը: Նշեց, որ նման խնդիր լուծումը թերևս պետք է լինի դասապրոցեսի ավելի հետաքրքիր կազմակերպումը կամ ուսումնական պլանների փոփոխությունը: Պ. Պետրոսյանը նշեց, որ պետք է համեմատել մեր գործող ուսումնական պլանները այլ, այդ թվում ՌԴ մանկավարժական համալսարանի ուսումնական պլանների հետ: Գ. Դեմիրխանյանը պատասխանեց, որ այդ աշխատանքները արդեն արվել են դեռևս Բուհի նախորդ հավատարմագրման աշխատանքների ժամանակ, ամբիոնները բենչմարքինգ (համեմատվել են ուսումնական պլանները) արդեն արել են և ֆիզիկայի ամբիոնում այդ աշխատանքներով զբաղվել է ամբիոնի որակի պատասխանատու Ս. Դանիելյանը: Նաև համեմատությունը տարվել է դպրոցական չափորոշիչների և ուսումնական պլանների միջև: Գ. Դեմիրխանյանը նշեց, որ իրականում խնդիրը ավելի խորքային է և պետք է ավելի խորքային աշխատանքներ տանել:

Նշված հարցի քննարկմանը Է. Կոկանյանը նշեց, որ չնայած այն հանգամանքին, որ իրականում ուսանողների թվաքանակով ամբիոնը զիջում է ֆակուլտետի այլ մասնագիտությունները սպասարկող ամբիոններին, սակայն գիտական գործունեությամբ պայմանավորված ամբիոնի աշխատակիցները լուրջ գիտական արդյունքներ են գրանցում, ինչը բնականաբար ազդում է նաև ԲՈՒՀ-ի վարկանիշի վրա: Այդ հանգամանքը չի կարելի անտեսել:

Եվ բացի դա ամբիոնի շրջանավարտների մեծ մասը աշխատում են բարձր վարկանիշ ունեցող դպրոցներում, ինչը ևս խոսում է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի բարձր որակի և աշխատանքի մասին:

Ըստ օրակարգի 2-րդ հարցով Է. Կոկանյանը նշեց, որ ամփոփիչ ատեստավորման որակավորման քննությունները նշանակված են հունիսի 1-ին և հունիսի 7-ին: Հունիսի 1-ին տեղի կունենա առկա բակալավրիատի (1 ուսանող) և առկա մագիստրատուրա (5 ուսանող) և հունիսի 7-ին հեռակա բակալավրիատի (4 ֆիզիկ և 1 բնագետ, թվով 5 ուսանող) ամփոփիչ որակավորման քննությունները: Նախապաշտպանությունները ավարտվել են, առկա բակալավրիատի թվով բոլորը երաշխավորվել են պաշտպանության: Classroom հարթակում ստեղծված են համապատասխան դասընթացները, տեղադրված են անհրաժեշտ նյութերը:

Ամփոփիչ ատեստավորման քննությունների մասով Գ.Դեմիրխանյանը հարց բաժրացրեց դրանց անցկացման ձևի մասին: Խոսքը գնում էր ինչպես հանձնաժողովի այնպես և ուսանողների մասով: Է.Կոկանյանը առաջարկեց կիրառել նախորդ տարի ընդունված հիբրիդային ձևաչափը հանձնաժողովի մասով: Հաշվի առնելով երկրում ընդդիմության կողմից կազմակերպվող անհնազանդության ակցիաների հետևանքով հնարավոր լոգիստիկ խնդիրները առաջարկվեց նույն հիբրիդային ձևաչափը ընտրել նաև ուսանողների մասով: Գ. Դեմիրխանյանը հավելեց, որ հիվանդության և այլ խնդիրների դեպքում ուսանողը պետք է նախապես դիմում ներկայացնի և թույլտվություն ստանա առցանց մասնակցության համար:

ՈՐՈՇՎԵՑ ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովի անդամների մասնակցության հիբրիդային ձևաչափը: Առցանց ձևաչափ կիրառել նաև այն ուսանողների համար, որոնց ներկայությունը օբյեկտիվորեն հնարավոր չէ և որոնք համապատասխան թույլտվություն կստանան դեկանատից:

Նիստի նախագահ  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար  Ս. Դեմիրխանյան